ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոն մարզպետ,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարվել է նոր մրցույթ:

Մրցույթը կկայանա 2022 թվականի հունիսի 7-ին՝ ժամը 12 ^{00}-ին:

Կից ներկայացվում է քաղվածք՝ կառավարման խորհրդի համապատասխան նիստի արձանագրությունից և հայտարարության տեքստը:

Առդիր՝ 3 թերթ :

«Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» և «Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների կառավարման խորհրդի նախագահ՝ Գ. Հովհաննիսյան

02. 05. 2022թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 2-02691-2022
02 05 2022 թ.

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ՀԱՑԻԿԻ ԱՎԵՏԻՍ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ԵՎ «ԽԱՆՋՅԱՆԻ ԱՐՄԵՆ ԲԵՆԻԱՄԻՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022Թ. ՄԱՅԻՍԻ 2-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ N 16 ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Նիստը գումարվել է 2022 թվականի մայիսի 2-ին:

Նիստը իրավազոր է մասնակցում էին կառավարման խորհրդի 14 /տասնչորս/ անդամներից 9-ը /ինը/:

ՕՐԱԿԱՐԳ

1. **«Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի հայտարարության մասին / զեկուցող՝ Գոռ Հովհաննիսյան/:**

ԼՍԵՑԻՆ.

Գոռ Հովհաննիսյանը ներկայացրեց, որ «Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում անցկացվելու է դպրոցի գործադիր տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար նոր մրցույթ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 161-Ն որոշման երկրորդ կետի ենթակետը և 2021 թվականի օգոստոսի 27-ի N 1380-Ն որոշման երրորդ կետի երկրորդ ենթակետը՝ այն է՝ Հաստատության կոլեգյալ կառավարման մարմինը՝ խորհուրդը, 3 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի հայտարարելու մասին որոշում: Խորհուրդը, տնօրենի թափուր պաշտոն առաջանալու օրվանից հաշված, առավելագույնը եռամսյա ժամկետում կազմակերպում և անցկացնում է տնօրենի թափուր պաշտոնի տեղի համար մրցույթ :

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ միացյալ կառավարման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

«Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի համար անցկացնել նոր մրցույթ:

Փաստաթղթերն ընդունման ժամկետ սահմանել 2022 թ. մայիսի 3-ից 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը նշանակել 2022թ. հունիսի 7–ին՝ ժամը 12 ^{00}-ին:

Խորհրդի որոշումը ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին և ՀՀ Արմավիրի մարզպետին:

«Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» և «Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների կառավարման խորհրդի նախագահ՝ Գ. Հովհաննիսյան

ՀՀ Արմավիրի մարզի «Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» և «Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

ՀՀ Արմավիրի մարզի «Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
2. «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացվել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը) (այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5. ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թ. մայիսի 3-ից 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոցում:

Մրցույթը տեղի կունենա **2022թ. հունիսի 7-ին՝ ժամը 12 ^{00}-ին:** ՀՀ Արմավիրի մարզի Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Հացիկ, 1-ին փողոց, 26 շենք:

Տեղեկությունների համար դիմել հեռախոս՝ 093079570, էլ.փոստ՝ hatsikidproc-15@mail.ru: